Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Արթիկ համայնքի «Արթիկի թիվ 4 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի

տնօրենի 2026 թվականի փետրվարի 10-ի N 95-Ա հրամանի

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի թիվ 4 մսուր - մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին**

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի թիվ 4 մսուր – մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ֆիզիկական կուլտուրայի հրահանգիչ**<br>(0,5 դրույք ) | 1) **Որակավորման պահանջները՝ նախադպրոցական ուսումնական հաստատության ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝** միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և վերջին տասը տարվա ընթացքում ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի առնվազն երեք տարվա ստաժ<br>2) **Ընդհանուր պահանջները՝ Նախադպրոցական ուսումնական հաստատության ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի պաշտոն զբաղեցնողը պետք է՝**<br>1) տիրապետի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին.<br>2) իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝<br>ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասի», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Լիցենզավորման մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգիրքը», «Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը», | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝**<br>1)դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ<br>2)դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից<br>3)տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը<br>4)դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար | 1) Դիմում (ձև 1 )<br>2) Անձը հաստատող փաստաթուղթ<br>3)Կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ)<br>4)Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ /առկայության դեպքում/<br>5)Ինքնակենսագրություն<br>6)Մեկ լուսանկար՝ 3*4չափի<br>7)Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ<br>8)Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական կցագրման վկայական<br>9)Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր ( դրանց առկայության դեպքում):<br><br>**Մրցույթին մասնակցելու** |

| | | | |
|---|---|---|---|
| | Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը. բ. նախադպրոցական մանկավարժության, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի, անատոմիայի, մարզագործիքների վրա ուսուցման մեթոդիկայի հիմունքներին, | | **համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով** |

| **Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը** | **Դիմումների և փաստաթղթերի ընդունումը** | **Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները** |
|---|---|---|
| **Վայրը**՝ ՀՀ Շիրակի մարզ, Արթիկ համայնք ք. Արթիկ, Ղարիբջանյան,1/5, **Օրը**՝ 2026 թ մարտի 13 - ին, **Ժամը**՝ 11:00-ին | Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի թիվ 4 մսուր - մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, Հեռ. 098188113: Հարցաշարերը տեղադրված են ԿԳՄՍՆ կայքում (Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «22» հոկտեմբեր 2024 թվականի N 1981-Ա/2 հրաման ): Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 - 17:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից | 2026 թվականի մարտի 10-ը ներառյալ |